**Երաշխավորված է**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

---- ------------- 20 **թիվ------- հրամանով**

**հիմք՝ Ուսուցման ազգային հիմնադրամի ----- -------------- 20 թիվ ---- մասնագիտական եզրակացությանը**

**Մասնագիտության (զբաղմունքի, աշխատանքի) անվանումը** Դիմահարդար

**Լրացուցիչ կրթական ծրագրին մասնակցության մուտքային պահանջներ** Չի նախատեսվում

**Լրացուցիչ կրթական ծրագրով նախատեսված զբաղմունքի նկարագրությունը՝ ըստ պատվերի նպատակադրման**

Այս մոդուլի նպատակն է մասնակցի մոտ ձևավորել մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտություններ: Մոդուլի ավարտին մասնակիցը կունենա կունենա մաշկի հիվանդությունների վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, հիգենիայի և անվտանգության ապահովում, դիմահարդարում, վիզաժ, մշակում, մազահանում, դիմակներ, կոսմետիկ բաղադրամասեր պատրաստելու կարողություն:

**Առաջարկվող ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ձեռք բերվող ուսումնառության արդյունքներ**

1) կատարի սանիտարիայի և հիգիենայի պահպանում,
2) տիրապետի դիմահարդարման գործիքներով և սարքավորումներով աշխատելու հիմնական հմտություններին,
3) ներկայացնի էպիլացիայի տեսակները, նշանակությունը,
4) տիրապետի բուժական կոսմետոլոգիա
5) կատարի մաշկի՛ խնամք, դիմակներ
6) կատարի դիմահարդարում, վիզաժ:

**ԼԿԾ ամփոփիչ գնահատման մեթոդը**

Ծրագրով սահմանված յուրաքանչյուր մոդուլի համար կազմակերպվում է տվյալ ծրագրի կատարման չափանիշները ընդգրկող ամբողջական առաջադրանք, որով հնարավոր կլինի փաստացի դիտարկել ձեռք բերված ուսումնառության արդյունքները գործնականում կիրառելու աշխատանքային հմտությունները:

**Ծրագրի տևողությունը, բեռնվածության ծավալը՝** 3 ամիս, 350 ժամ

**Ուսումնական խումբ՝** լսարանային՝ մինչև 10 մասնակից, գործնական աշխատանքային՝ մինչև 5 մասնակից

**Իրականացնող կազմակերպությունը՝** ՀՀԿԳՄՍՆ «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ2 պետական քոլեջ» ՊՐԱԿ

| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԴԻՄԱՀԱՐԴԱՐ** | |
|---|---|
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլի նպատակն է մասնակցի մոտ ձևավորել մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտություններ: Մոդուլի ավարտին մասնակիցը կունենա Մաշկի հիվանդությունների վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, հիգենիայի և անվտանգության ապահովում, դիմահարդարում, վիզաժ, մշակում, մազահանում, դիմակներ, կոսմետիկ բաղադրամասեր պատրաստելու կարողություն: |
| **Մոդուլի տևողությունը** | 350 ժամ, որից՝<br>տեսական ուսուցում՝ 120 ժամ<br>գործնական պարապմունք՝ 230 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: |
| **ՈՒսումնառության արդյունքներ** | Մոդուլով սահմանված ուսումնառության արդյունքները ձեռք բերելու արդյունքում, մասնակիցը պետք է՝<br>1) կատարի սանիտարիայի և հիգիենայի պահպանում,<br>2) տիրապետի դիմահարդարման գործիքներով և սարքավորումներով աշխատելու հիմնական հմտություններին,<br>3) ներկայացնի էպիլացիայի տեսակները, նշանակությունը,<br>4) տիրապետի բուժական կոսմետոլոգիա,<br>5) կատարի մաշկի՛ խնամք, դիմակներ,<br>6) կատարի դիմահարդարում, վիզաժ: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք** 1 | Կատարել սանիտարիայի և հիգիենայի պահպանում |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում սանիտարիայի նորմերը,<br>2) տարբեր իրավիճակներում պահպանում է սանիտարիայի նորմերը,<br>3) դասակարգում է օգտագործվող հիմնական ախտահանող նյութերը,<br>4) ճիշտ է պատրաստում դրանցից լուծույթներ, |

| | |
|---|---|
| | 5) ճիշտ է ներկայացնում անձնական հիգիենայի նորմերը,<br>6) ճիշտ է ներկայացնում աշխատանքային հիգիենայի նորմերը,<br>7) պահպանում է հիգիենայի նորմերը տարբեր իրավիճակներում: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Մասնակցին կտրվեն հարցեր սանիտարիայի նորմերի, օգտագործվող հիմնական ախտահանող նյութերի վերաբերյալ: Գործնական առաջադրանքների միջոցով մասնակցին կհանձնարարվի դասակարգել հիմնական ախտահանող նյութերը, պատրաստել դրանցից լուծույթներ, ներկայացնել աշխատանքային հիգիենայի նորմերը տարբեր իրավիճակներում:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր: Գործնական ուսուցումը կրակացվում է ուսումնական վարսավիրանոցում: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական պարապմունք՝ 10 ժամ |
| **Ուսումնառության արդյունք** 2 | Տիրապետել դիմահարդարման գործիքներով և սարքավորումներով աշխատելու հիմնական հմտություններին |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճանաչում է դիմահարդարման մեջ կիրառվեղ գործիքները,<br>2) ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը, կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները,<br>3) ներկայացնում է օգտագործվող գործիքների ախտահանման գործընթացը՝ աշխատանքի ամբողջ ընթացքում,<br>4) կարողանում է ներկայացնել աշխատանքային գործիքների և սարքավորումների ախտահանումը ախտահանիչ սարքավորման միջոցով, ընտրել և կարգավորել սարքավորման աշխատանքային ռեժիմները՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները,<br>5) կարողանում է ներկայացնել աշխատանքային գործիքների և սարքավորումների ախտահանումը ախտահանիչ նյութերով,<br>6) ճիշտ է ճանաչում և տարբերակում ախտահանող նյութերը՝ սպիրտ, քլորամին, հակասեպտիկներ,<br>7) ճիշտ է ընտրում նյութերը և որոշում չափաբաժինները,<br>8) ճիշտ է կատարում աշխատանք ընտրված նյութով՝ պահպանելով անվտանգության կանոնները,<br>9) տարբերակում է խնամքի նյութերը՝ մաքրող, մերսման, ՍՊԱ, դիմակները,<br>10) ճիշտ է ներկայացնում դեմքի մաշկը մաքրող նյութերը,<br>11) ճիշտ է ընտրում մերսման նյութերը՝ յուղեր, կրեմներ,<br>12) ճիշտ է ընտրում ՍՊԱ գործողության նյութերը՝ խոտաբույսերի օգտագործում, պարաֆինաթերապիա,<br>13) տարբերակում է դիմակները՝ հանգստացնող, փափկացնող, սնուցող, խոնավեցնող, սպիտակեցնող: |

| | |
|---|---|
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Մասնակցի կտրվեն հարցեր դիմահարդարման մեջ կիրառվեղ գործիքների, դրանց ախտահանման գործընթացի, շահագործման կարգի և անվտանգության կանոնների, ախտահանիչ սարքավորումների և նյութերի վերաբերյալ: Գործնական առաջադրանքների միջոցով մասնակցին կհանձնարարվի ներկայացնել աշխատանքային գործիքների և սարքավորումների ախտահանումը ախտահանիչ սարքավորման միջոցով, ընտրել և կարգավորել սարքավորման աշխատանքային ռեժիմները՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները, տարբերակել ախտահանող նյութերը, կատարել աշխատանք տվյալ նյութով՝ պահպանելով անվտանգության կանոնները: Բնութագրել և ընտրել դեմքի մաշկը մաքրող նյութերը, մերսման նյութերը, դիմակները: Կատարել աշխատանք ընտրված նյութերով:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր: Գործնական ուսուցումը կրակացվում է ուսումնական վարսավիրանոցում: |
| **ՈՒ-սուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 10 ժամ<br>գործնական պարապմունք՝ 20 ժամ |
| **Ուսումնառության արդյունք** 3 | Ներկայացնում է էպիլացիա, տեսակները, նշանակությունը |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում էպիլյացիայի խնդիրները, տեսակները, ցուցումները և հակացուցումները,<br>2) ճիշտ է տարբերակում էպիլյացիայի կիրառումը մաշկի տարբեր տիպերի խնամքի և կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>3) ճիշտ է ներկայացնում էպիլյացիայի ազդեցությունը մաշկի խնամքի գործընթացում,<br>4) ճիշտ է ներկայացնում մազի կառուցվածքը, ֆունկցիան և հիգիենիկ խնամքը,<br>5) ճիշտ է ներկայացնում օրգանիզմում ախտաբանական փոփոխությունների ժամանակ առաջացած գերմազակալման պատճառները, տեսակները և կանխարգելումը,<br>6) ճիշտ է ներկայացնում դեպիլյացիան, տարբերակումը էպիլյացիա և դեպիլյացիայի, դեպիլյատոր<br>7) նյութերի կիրառումը ըստ ցուցումի,<br>8) ճիշտ է ներկայացնում էպիլյատոր սարքերը, դրանց կիրառումը, ցուցումները և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,<br>9) ճիշտ է ներկայացնում ասեղային էպիլյացիան, ցուցումները և հակացուցումները,<br>10) ճիշտ է տարբերակում ասեղային էպիլյացիայի կիրառումը մաշկի տարբեր տիպերի և կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>11) ճիշտ է ներկայացնում ասեղային էպիլյացիայի կատարման տեխնիկան,<br>12) ճիշտ է կատարում էպիլյացիայի ժամանակ տեղային անզգայացումը,<br>13) ճիշտ է ներկայացնում ասեղային էպիլյացիայից հետո մաշկի խնամքը և կանխարգելումը, |

| | |
|---|---|
| | 14) ճիշտ է ներկայացնում բիոէպիլյացիան, ոսկի տեսակները, ցուցումները և հակացուցումները,<br>15) ճիշտ է տարբերակում բիոէպիլացիայի կիրառումը մաշկի տարբեր տիպերի և կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>16) ճիշտ է ներկայացնում բիոէպիլյացիայի կատարման տեխնիկան,<br>17) ճիշտ է ներկայացնում բիոէպիլյացիայից հետո մաշկի խնամքը և կանխարգելումը: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Մասնակցին կտրվեն հարցեր էպիլյացիայի խնդիրները, տեսակները, ցուցումները և հակացուցումները ներկայացնելու, էպիլյացիայի ազդեցությունը մաշկի խնամքի գործընթացում ներկայացնելու, ինչպես նաև մազի կառուցվածքը, ֆունկցիան և հիգիենիկ խնամքը ներկայացնելու վերաբերյալ: Գործնական հանձնարարությամբ մասնակցին կհանձնարարվի ներկայացնել էպիլյացիայի կիրառումը մաշկի տարբեր տիպերի խնամքի և կոսմետիկ թերությունների ժամանակ,տարբերակել դեպիլյացիան, էպիլյացիա և դեպիլյացիայի: Կհանձնարարվի կիրառել նյութերը ըստ ցուցումի, ներկայացնել ասեղային էպիլյացիայի կատարման տեխնիկան, բիոէպիլյացիայի կատարման տեխնիկան և էպիլյացիաներից հետո մաշկի խնամքը և կանխարգելումը:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր, ասեղային և բիոէպիլացիայի սարքեր: Գործնական ուսուցումն իրականացվում է ուսումնական դիմահարդարման սրահում: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 25 ժամ<br>գործնական պարապմունք՝ 50 ժամ |
| **Ուսումնառության արդյունք** 4 | Տիրապետում է բուժական կոսմետոլոգիային |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է տարբերակում բուժական կոսմետոլոգիայի տեսակները և կապը միմյանց հետ,<br>2) ճիշտ է ներկայացնում բուժական կոսմետոլոգիայի խնդիրները և նպատակները,<br>3) ճիշտ է տարբերակում մաշկի տարբեր տիպերի և տարիքային խմբերում բուժական կոսմետոլոգիայի խնդիրները,<br>4) ճիշտ է ներկայացնում մաշկի և նրա աճանցյալների կառուցվածքը և ֆունկցիան,<br>5) ճիշտ է ներկայացնում և տարբերակում մաշկի տիպերը,<br>6) ճիշտ է ներկայացնում մաշկի տարբեր տեսակների խնամքը՝ տարբեր կոսմետիկ թերությունների ժամանակ խնամքը, ցուցումները և հակացուցումները,<br>7) ճիշտ է ներկայացնում մաշկի խնամքի ժամանակ կիրառվող ասեպտիկայի ու անտիսեպտիկայի և անվտանգության տեխնիկայի կանոնները,<br>8) ճիշտ է տարբերակում մաշկի խնամքի ժամանակակից մեթոդները (ապարատային և ոչ ապարատային),<br>9) ճիշտ է տարբերակում մաշկի տարբեր տեսակների ժամանակ օգտագործվող մաշկի խնամքի ժամանակակից մեթոդները, |

| | |
|---|---|
| | 10) ճիշտ է տարբերակում կոսմետիկ թերությունների ժամանակ օգտագործվող մաշկի խնամքի ժամանակակից մեթոդները,<br>11) ճիշտ է ներկայացնում դիմակների պատրաստման տեխնիկան և կիրառման կանոնները,<br>12) ճիշտ է ներկայացնում մաշկի խնամքի միջոցների ցուցումները և հակացուցումները, կիրառման սկզբունքները: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր բուժական կոսմետոլոգիայի տեսակների և միմյանց հետ կապի, բուժական կոսմետոլոգիայի խնդիրների և նպատակների, մաշկի տարբեր տիպերի և տարիքային խմբերում բուժական կոսմետոլոգիայի խնդիրների վերաբերյալ: Կտրվեն հարցեր մաշկի և նրա ածանցյալների կառուցվածքի, մաշկի տիպերի վերաբերյալ: Մասնակցին կհանձնարարվի ներկայացնել մաշկի տարբեր տեսակների խնամքը՝ տարբեր կոսմետիկ թերությունների ժամանակ խնամքը, ցուցումները և հակացուցումները, մաշկի խնամքի ժամանակ կիրառվող ասեպտիկայի ու անտիսեպտիկայի և անվտանգության տեխնիկայի կանոնները, ներկայացնել դիմակների պատրաստման տեխնիկան և կիրառման կանոնները:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր, մաշկի խնամքի համար նյութեր, պարագաներ, սարավորումներ, գործիքներ: Գործնական ուսուցումն իրականացվում է ուսումնական դիմահարդարման սրահում: |
| **Ուսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 25 ժամ<br>գործնական պարապմունք՝ 50 ժամ |
| **Ուսումնառության արդյունք** 5 | Կատարում է մաշկի խնամք, դիմակներ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում շոքեբաղնիքի դերը մաշկի խնամքի գործընթացում, ցուցումները և հակացուցումները,<br>2) ճիշտ է տարբերակում շոքեբաղնիքի կիրառումը մաշկի տարբեր տիպերի խնամքի գործընթացում,<br>3) ճիշտ է ներկայացնում շոքեբաղնիքի ազդեցությունը դեմքի մաքրման և խնամքի գործընթացում,<br>4) ճիշտ է ներկայացնում շոքեբաղնիքը դեմքի խորը մաքրման ժամանակ,<br>5) ճիշտ է ընտրում շոքեբաղնիքի ժամանակ օգտագործվող բուժիչ նյութերը կախված մաշկի տիպից և ցուցումից,<br>6) ճիշտ է կիրառում շոքեբաղնիքի պատրաստման ժամանակ անվտանգության տեխնիկայի կանոնները,<br>7) ճիշտ է ներկայացնում դեմքի խորը մաքրումը, ցուցումները և հակացուցումները,<br>8) ճիշտ է ներկայացնում դեմքի խորը մաքրումից հետո մաշկի հետագա խնամքը (դիմակներ, մերսում, ֆիզիոթերապևտիկ միջամտություն),<br>9) ճիշտ է ներկայացնում դեմքի խորը մաքրումը մաշկի տարբեր տեսակների դեպքում,<br>10) ճիշտ է կիրառում դեմքի խորը մաքրման ժամանակ ասեպտիկայի և անտիսեպտիկայի կանոնները,<br>11) ճիշտ է կատարում դեմքի խորը մաքրումը, ըստ հերթականության,<br>12) ճիշտ է ներկայացնում դեմքի խորը մաքրման անվտանգության տեխնիկայի կանոնները, |

| | |
|---|---|
| | 13) ճիշտ է ներկայացնում պիլինգի դերը և նշանակությունը կոսմետոլոգիայում,<br>14) ճիշտ է տարբերակում պիլինգի տեսակները մաշկի տարբեր տեսակների և կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>15) ճիշտ է ներկայացնում պիլինգի ցուցումները և հակացուցումները մաշկի տարբեր տեսակների ու կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>16) ճիշտ է ներկայացնում պիլինգի ժամանակ օգտագործվող նյութերը և գործիքները՝ կախված ցուցումից, մաշկի տիպից և ակնկալվող արդյունքից,<br>17) ճիշտ է կատարում պիլինգը՝ ըստ հերթականության,<br>18) ճիշտ է ներկայացնում պիլինգից հետո մաշկի խնամքը և կանխարգելումը,<br>19) ճիշտ է ներկայացնում դիմակների տեսակները, ցուցումները, հակացուցումները և դրանց նշանակությունը դեմքի մաշկի տարբեր տեսակների, կոսմետիկ թերությունների և մարմնի խնամքի գործընթացում,<br>20) ճիշտ է ներկայացնում թրջոցները, տեսակները, ցուցումները հակացուցումները և դրանց նշանակությունը դեմքի մաշկի տարբեր տեսակների, կոսմետիկ թերությունների և մարմնի խնամքի գործընթացում,<br>21) ճիշտ է ներկայացնում կոմպրեսները, տեսակները, ցուցումները, հակացուցումները և դրանց նշանակությունը դեմքի մաշկի տարբեր տիպերի, կոսմետիկ թերությունների և մարմնի խնամքի գործընթացում,<br>22) ճիշտ է տիրապետում դիմակների, թրջոցների և կոմպրեսների պատրաստաման տեխնիկային՝ մաշկի տարբեր տեսակների խնամքի, կոսմետիկ թերությունների վերացման և կանխարգելման գործընթացում,<br>23) ճիշտ է տիրապետում դիմակներում, թրջոցներում և կոմպրեսներում օգտագործվող անհրաժեշտ նյութերի և պարագաների օգտագործմանը,<br>24) ճիշտ է ներկայացնում դիմակների, թրջոցների և կոմպրեսների պատրաստման ասեպտիկայի և անտիսեպտիկայի կանոնները:<br>25) ճիշտ է ներկայացնում պարանոցի մաշկի խնամքը՝ տարիքային փոփոխությունների և մաշկի կոմետիկ թերությունների ժամանակ, ցուցումները և հակացուցումները,<br>26) ճիշտ է ներկայացնում կոպերի մաշկի խնամքը, տարիքային փոփոխությունները, ցուցումները և հակացուցումները,<br>27) ճիշտ է ներկայացնում լանջաբացվածքի մաշկի խնամքը, ցուցումները և հակացուցումները,<br>28) ճիշտ է տիրապետում պարանոցի, կոպերի և լանջաբացվածքի մաշկի խնամքի դասական և ժամանակակից մեթոդներին,<br>29) ճիշտ է ներկայացնում պարանոցի, կոպերի և լանջաբացվածքի մաշկի խնամքի մեջ օգտագործվող նյութերը, սարքավորումները և պարագաները,<br>30) ներկայացնում է ցնցուղի ազդեցությունը պարանոցի, լանջաբացվածքի մաշկի և մարմնի խնամքի գործընթացում: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Մասնակցին կտրվեն հարցեր դեմքի խորը մաքրման, ցուցումների և հակացուցումների վերաբերյալ: Գործնական հանձնարարությամբ մասնակցին կհանձնարարվի ներկայացնել դեմքի խորը մաքրումից հետո մաշկի հետագա խնամքը (դիմակներ, մերսում, ֆիզիոթերապևտիկ միջամտություն, դեմքի խորը մաքրումը մաշկի տարբեր տեսակների դեպքում |

| | |
|---|---|
| | դեմքի խորը մաքրման ժամանակ ասեպտիկայի և անտիսեպտիկայի կանոնները, ներկայացնել պիլինգի ժամանակ օգտագործվող նյութերը և գործիքները՝ կախված ցուցումից, մաշկի տիպից և ակնկալվող արդյունքից, դիմակների տեսակները, ցուցումները, հակացուցումները և դրանց նշանակությունը դեմքի մաշկի տարբեր տեսակների, կոսմետիկ թերությունների և մարմնի խնամքի գործընթացում, կիանձնարարվի պատրաստել դիմակներ, թրջոցներ և կոմպրեսներ մաշկի տարբեր տեսակների խնամքի, կոսմետիկ թերությունների վերացման և կանխարգելման համար:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր, մաշկի խնամքի համար նյութեր, պարագաներ, սարքավորումներ, գործիքներ: Գործնական ուսուցումն իրականացվում է ուսումնական դիմահարդարման սրահում: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 25 ժամ<br>գործնական պարապմունք՝ 50 ժամ |
| **Ուսումնառության արդյունք** 6 | Կատարում է դիմահարդարում, վիզաժ |
| **Կատարման չափանիշներ** | 1) ճիշտ է ներկայացնում դիմահարդարման ժամանակ օգտագործվող գործիքները, նյութերը,<br>2) ճիշտ է ներկայացնում պճնազարդման կրեմները, տեսակները և ճիշտ կիրառումը կախված մաշկի տիպից,<br>3) ճիշտ է ներկայացնում տոնային, հեղուկ, կրեմանման, կրեմ դիմափոշու նման և հետքերը թաքցնող կրեմները, դրանց տեսակները, ցուցումները և կիրառումը կախված մաշկի տիպից և ակնկալվող արդյունքից,<br>4) ճիշտ է ներկայացնում կոսմետիկ դիմափոշին, տեսակները և ճիշտ կիրառումը դիմահարդարման ժամանակ,<br>5) ճիշտ է ներկայացնում կարմրաներկերը, տեսակները, ճիշտ օգտագործումը դիմահարդարման ժամանակ,<br>6) ճիշտ է ներկայացնում շրթնաքսուկները, շուրթերը ուրվագծող մատիտները, տեսակները, ճիշտ օգտագործումը դիմահարդարման ժամանակ,<br>7) ճիշտ է ներկայացնում հոնքերի և աչքերի մատիտները, տեսակները և ճիշտ կիրառումը դիմահարդարման ժամանակ,<br>8) ճիշտ է ներկայացնում, թարթիչների տուշերը, կոպերի ստվարաներկերը, տեսակները և ճիշտ կիրառումը դիմահարդարման ժամանակ,<br>9) ճիշտ է ներկայացնում կոսմետիկայում օգտագործվող ոչ պարտադիր նյութերը, դրանց տեսակները և ճիշտ կիրառումը դիմահարդարման ու կոսմետիկ թերությունների ժամանակ,<br>10) ճիշտ է ներկայացնում դեմքի տիպերը, տիպերը և դրանց շտկումը դիմահարդարման միջոցով,<br>11) ճիշտ է ներկայացնում հոնքերի տեսակները և դրանց շտկումը դիմահարդարման միջոցով, թարթիչների ներկում,<br>12) ճիշտ է ներկայացնում աչքերի տիպերը և դրանց ճիշտ ներկումը դիմահարդարման ժամանակ,<br>13) ճիշտ է ներկայացնում շուրթերի տիպերը և դրանց շտկումը դիմահարդարման ժամանակ:<br>14) ճիշտ է ներկայացնում դիմահարդարման ժամանակ օգտագործվող գույները, և դրանց ճիշտ ընտրությունը կախված ակնկալվող արդյունքից, |

| | |
|---|---|
| | 15) ճիշտ է ներկայացնում մարդկային չորս տիպերը և ճիշտ դիմահարդարումը,<br>16) ճիշտ է ներկայացնում ամենօրյա դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,<br>17) ճիշտ է ներկայացնում երեկոյան դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,<br>18) ճիշտ է ներկայացնում եվրոպական, արևելյան հարսանեկան դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,<br>19) ճիշտ է ներկայացնում «Smokey Eye» դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, դիմահարդարման փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,<br>20) ճիշտ է ներկայացնում դիմահարդարման ժամանակ օգտագործվող ոսկեգույն երանգները՝ արևահարված մաշկի համար, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան,<br>21) ճիշտ է ներկայացնում դիմահարդարումը ակվարելային ոճով՝ օգտագործելով վարդագույն երանգներ, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան: |
| **Գնահատման միջոցը** | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Մասնակցի կտրվեն հարցեր դիմահարդարման ժամանակ օգտագործվող գործիքների, նյութերի, պճնազարդման կրեմների, տեսակների և ճիշտ կիրառման մասին, տոնային, հեղուկ, կրեմանման, կրեմ դիմափոշու նման և հետքերը թաքցնող կրեմների, դրանց տեսակների, ցուցումների և կիրառման մասին, կոսմետիկ դիմափոշու, կարմրաներկերի, շրթնաքսուկների, շուրթերը ուրվագծող մատիտների, հոնքերի և աչքերի մատիտների, տեսակները և դրանց ճիշտ կիրառման մասին: Գործնական հանձնարարությամբ մասնակցին կհանձնարարվի ներկայացնել ամենօրյա դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան, երեկոյան դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան, եվրոպական, արևելյան հարսանեկան դիմահարդարումը, օգտագործվող նյութերը և գործիքները, փուլերը, աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան, «Smokey Eye» դիմահարդարումը, դիմահարդարման ժամանակ օգտագործվող ոսկեգույն երանգները՝ արևահարված մաշկի համար, դիմահարդարումը ակվարելային ոճով՝ օգտագործելով վարդագույն երանգներ, փուլերը,աշխատանք մոդելի հետ և կատարման տեխնիկան:<br>Արդյունքի յուրացումը դրական է, եթե մասնակիցը հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կարողանում է կատարել ամբողջությամբ: |
| **Մեթոդաբանությունը և ռեսուրսները** | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ուսումնառության և ցուցադրական նյութեր, Դիմահահարդարման համար նյութեր, պարագաներ: Գործնական ուսուցումն իրականացվում է ուսումնական դիմահարդարման սրահում: |
| **ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը** | տեսական ուսուցում՝ 25 ժամ<br>գործնական պարապմունք՝ 50 ժամ |

Հավելված 2

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

**«Դիմահարդար» մասնագիտության մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագիր**

| N | **Մոդուլի անվանումը** | Գործնական պարապմունքների (այդ թվում՝ արտադրական աշխատանքային) նորմատիվային ժամերը | Տեսական պարապմունքների (այդ թվում՝ արտալսարանային) նորմատիվային ժամերը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| | Կատարել սանիտարիայի և հիգիենայի պահպանում | 10 | 10 | 20 |
| | Տիրապետել դիմահարդարման գործիքներով և սարքավորումներով աշխատելու հիմնական հմտություններին | 20 | 10 | 30 |
| | Ներկայացնում է էպիլացիա, տեսակները, նշանակությունը | 50 | 25 | 75 |
| | Տիրապետում է բուժական կոսմետոլոգիային | 50 | 25 | 75 |
| | Կատարում է մաշկի խնամք, դիմակներ | 50 | 25 | 75 |
| | Կատարում է դիմահարդարում, վիզաժ | 50 | 25 | 75 |
| | **Ընդամենը** | 230 | 120 | 350 |